ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» սեպտեմբերի 2021թ. № 346

ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Մաթոսյանի զեկուցագիրը, Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակի տարելիցին պատերազմի զոհերի գերեզմանատանը հարգանքի տուրք մատուցելու նպատակով մեխակներ, A5 չափի տպագրությամբ նկարներ, ՀՀ դրոշներ, մետալոպլաստե ծողեր և մալուխի կապիչ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 37 950 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» սեպտեմբերի 2021 թվականի № 347

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱԶԳԱՆՈՒՇ ԱԼԲԵՐՏԻ ՖՐԱՆԳՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետով՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի սեպտեմբերի 27-ին Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի պետ (ծածկագիր 2.1-3) Ազգանուշ Ալբերտի Ֆրանգյանին ազատել համայնքային ծառայության զբաղեցրած պաշտոնից:

Աշխատանքային հարաբերությունների ավարտը համարել 2021 թվականի սեպտեմբերի 26-ը:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ սույն որոշումն ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ.սեպտեմբերի 25
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» սեպտեմբերի 2021 թվականի № 348

ԱԶԳԱՆՈՒՇ ԱԼԲԵՐՏԻ ՖՐԱՆԳՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր 1.1-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի եզրակացությունը և Ազգանուշ Ալբերտի Ֆրանգյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի սեպտեմբերի 27-ից Ազգանուշ Ալբերտի Ֆրանգյանին նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր 1.1-1) համայնքային ծառայության պաշտոնում:

2.Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 340 000 (երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ: Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3.Աշխատանքային գործառույթները՝ համաձայն համայնքային ծառայության պաշտոնի անձնագրի:

4.Աշխատաժամանակի ռեժիմը, ամենամյա արձակուրդի տեսակը և տևողությունը՝ համաձայն աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի:

5. Ազգանուշ Ալբերտի Ֆրանգյանին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ.սեպտեմբերի 25
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» սեպտեմբերի 2021 թվականի N 349

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 401 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 02/11./32847-2021 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի «Սպիտակի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 401 որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

1) որոշման մեջ և որոշման հավելվածում նշված «քաղաքապետ» բառը փոխարինել «համայնքի ղեկավար» բառերով, իսկ «քաղաքապետարան» բառը փոխարինել «համայնքապետարան» բառով:

2) Որոշման հավելվածի 28-րդ կետի 9-րդ ենթակետից հետո լրացնել նոր 9.1 և 9.2 ենթակետեր հետևյալ բովանդակությամբ՝

«9.1) ապահովել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքի ներկայանալիս.

9.2) ապահովել սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը.»

3) Հավելվածի 33-րդ կետից հետո լրացնել նոր 33.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«33.1. Աշխատակազմում հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք պարտավոր են՝ աշխատանքի ներկայանալիս 28-րդ կետում նշված պաշտոնատար անձանց ներկայացնելու բնակչության

սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը:»

4) Հավելվածի 43-րդ կետից հետո լրացնել նոր 43.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«43.1. Մինչև 33.1-րդ կետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի ներկայանալը համարվում է (դիտվում է) որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:»

5) Հավելվածի 50-րդ կետից հետո լրացնել նոր 50.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«50.1. Սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտման հիմքով անցկացվող ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին բացատրությունը (զեկուցագիր և այլն) ներկայացվում է հատուկ՝ մեկօրյա (աշխատանքային) ժամկետում, բացատրությունը (զեկուցագրիը և այլն) ներկայացվում է գրավոր:»

6) Հավելվածի 52-րդ կետից հետ լրացնել նոր 52.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«52.1) համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված անձի վերաբերյալ տվյալները մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացվում են տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:»

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշման մասին տեղեկացնել աշխատակազմի հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«27» սեպտեմբերի 2021 թվականի № 350

ԷԴԳԱՐ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի (ծածկագիր 2.1-5) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի եզրակացությունը և Էդգար Մերուժանի Թորոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի սեպտեմբերի 28-ից Էդգար Մերուժանի Թորոսյանին նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի (ծածկագիր 2.1-5) համայնքային ծառայության պաշտոնում:

2.Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 260 000 (երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ: Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3.Աշխատանքային գործառույթները՝ համաձայն համայնքային ծառայության պաշտոնի անձնագրի:

4.Աշխատաժամանակի ռեժիմը, ամենամյա արձակուրդի տեսակը և տևողությունը՝ համաձայն աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի:

5. Էդգար Մերուժանի Թորոսյանին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ.սեպտեմբերի 27
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2021թ. № 351

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվարի՝ 2021 թվականի սեպտեմբերի 06-ի թերությունների ակտը, Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքի պահպանման և ընթացիկ նորոգման համար անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 9 310 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ